



## **Կարգապահական գործ թիվ ԿԳ-20001-20004**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2020 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 105-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ԹԻՎ ԿԳ/79-Ա**

### **ՓԱՍՏԱԲԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ՝ նաև խորհուրդ**), նիստը նախագահող՝ Սեդրակ Ասատրյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Սարգսյանի և Արմեն Ֆերոյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Սուսաննա Սարգսյանին (արտոնագիր՝ թիվ 1536) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

### **Պ Ա Ր Զ Ե Ց՝**

#### **1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գոռ Աբրահամյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**) ներկայացրել է երկու դիմում:

#### **Ա. 1-ին դիմումի համառոտ բովանդակությունը**

1-ին դիմումով Դիմողը հայտնել է, որ ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացվող զանգվածային լրատվության միջոցների, սոցիալական ցանցերի (facebook) և տեղեկատվական այլ ռեսուրսների մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ փաստաբան Սուսաննա Սարգսյանը (**այսուհետ՝ նաև Պատասխանող կամ Փաստաբան**) իր հրապարակային գործունեության ընթացքում առանձին լրատվամիջոցներով (*մասնավորապես՝ «Նոյան տրայան» գործակալության*) արվող մեկնաբանություններով, և իր ֆեյսբուքյան անձնական էջում արվող գրառումներով ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի վերաբերյալ շարունակաբար կատարում է հայտարարություններ, հանդես է գալիս մասնագիտական էթիկայի շրջանակներից դուրս եկող որակումներով, որոնք այնուհետ տարածվում են նաև հատուկ վարկաբեկման նպատակով պատրաստված և youtube.com ռեսուրսում հրապարակվող տեսանյութերի միջոցով:

Մասնավորապես՝

1. Պատասխանողի կողմից 14.12.2019թ. իր ֆեյսբուքյան էջին արված «*Դեռևս գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հույսը դրել է հանգած հրաբուխների և դրանցից մնացած մոխիրների վրա...*» գրառման մեջ առկա է հետևյալ նախադասությունը «*Ախր այ Արթուր ջան, այ բալիկ ջան էր հանգած հրաբուխները ճար անող էին թող իրենց գլխին ճար անեին, ո՞ր ես ընկել դրանց գիրկը: Խելքդ գլուխդ հավաքի, աջ ու ձախ միջոցներդ մի վատնի, մարդ ես դեռ այնքան նեղ օրեր կան առջևում, մի քիչ էլ վաղվա մասին մտածի*»:

2. 10.12.2019թ. Պատասխանողի ֆեյսբուքյան էջին «*Հիմա դուք առերևույթ գլխավոր դատախազ եք, թե՛ առերևույթ տղամարդ*» հակաէթիկական վերնագրի և կոլաժային լուսանկարի ներքո արված գրառման մեջ առկա են հետևյալ ձևակերպումները. «*...Այնպես որ ընդունեք բարի խորհուրդս ու մի խորացրեք ձեր առանց այն էլ ոչ հաճելի վիճակը, և մի թփրտացեք, միևնույն է դրանից ձեր բնույթն ու բովանդակությունը չի փոխվում իսկ մարդկանց մոտ հոգեխանդարման տրավորություններ հաստատ առաջացնում է...*»: (<https://www.youtube.com/watch?v=1HBGwzZQ9Ys>)

3. 07.12.2019թ. «ԱԳԼԱ Լոյերս փաստաբանական ընկերության» ֆեյսբուքյան էջին Պատասխանողի կողմից հրապարակված՝ «*Պարոն դեռևս գլխավոր դատախազ միգուցե դու՞ք եք հովանավորում երեխաների վաճառքով զբաղվող մաֆիան և սնվում դրա գործունեությունից*» սադրիչ վերնագրի ներքո արված գրառման մեջ առկա են ՀՀ գլխավոր դատախազի պատիվն ու արժանապատվությունը վիրավորող և անմեղության կանխավարկածը ոտնահարող հետևյալ ձևակերպումները. «*Կարծում եմ, որ հեռու չէ այն ժամանակը, որ ստիպված էք լինելու պատասխան տալ բոլոր կորած երեխաների համար*»:

*Եվ այդ նույն գործի շրջանակներում էլ հավանաբար պատասխան կտաք, թե որտեղից ընդամենը երկու տարում աստղաբաշխական կարողության տեր դարձաք և արդյոք այդ կարողությունը ստեղծված չէ երեխաների վաճառքից*»:

(<https://www.youtube.com/watch?v=F3zubTPeoQc&fbclid=IwAR1ZZKsvVHGRY6pTddW4Hs pOOxu-8yiScxkxOlsyZUzZxSivHGrOw1Nzhc>)

(<https://www.youtube.com/watch?v=Lp4b9p6wIY&fbid=IwAR3R6zYlioQZh6W2xxy9qslhzh nifkRCz4mPkV4nprnG3rw id1yZzclwK4E&app=desktop>)

Դիմողը նշել է, որ Փաստաբանի՝ նկարագրված վարքագիծն ակնհայտորեն դուրս է պաշտոնատար անձի գործունեության քննադատության կոռեկտության, անձի պատվի, արժանապատվության հանդեպ հարգանքի շրջանակներից, պարունակում է պաշտոնատար անձին հրապարակայնորեն անձնապես վիրավորելու, պիտակավորելու տարրեր, իսկ առանձին դեպքերում նաև հատում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Ըստ Դիմողի՝ նման վարքագիծն անհարիր է փաստաբանի բարձր կոչմանը, մասնագիտության հեղինակությանը և խաթարում է փաստաբանության նկատմամբ վստահությունն ու հարգանքը:

## **Բ. 2-րդ դիմումի բովանդակությունը**

2-րդ դիմումում Դիմողը հայտնել է որ ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացվող զանգվածային լրատվության միջոցների, սոցիալական ցանցերի (facebook) և տեղեկատվական այլ ռեսուրսների մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ փաստաբան Սուսաննա Սարգսյանն իր ֆեյսբուքյան անձնական էջում, որը հասանելի է բոլոր օգտատերերի համար, շարունակում է ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի վերաբերյալ անել գրառումներ, դրանցում օգտագործել իմաստային ձևակերպումներ և որակումներ, որոնք դուրս են բարոյականության և փաստաբանի մասնագիտական էթիկայի շրջանակներից: Այդ գրառումների բառացի օգտագործմամբ պատրաստվում են վարկաբեկիչ տեսանյութեր, հրապարակվում youtube.com ռեսուրսի՝ տարբեր օգտատերերի ալիքներով, որոնք ևս փաստաբան Սուսաննա Սարգսյանը ակտիվորեն տեղադրում ու տարածում են «facebook.com» սոցիալական ցանցի իր անձնական էջի միջոցով՝ կրկին հանրային հասանելիության ռեժիմով:

Մասնավորապես՝

1. Ս.Սարգսյանը 2020թ. հունվարի 6-ին իր ֆեյսբուքյան էջին արել է «*Կոնիչտրայից մինչև Դեյվիդ Կոպերֆիլդ՝ ՀՀ դեռևս գլխավոր դատախազը շարունակում է թփրտալ*» վերտառությամբ գրառում, որտեղ, մասնավորապես, առկա են հետևյալ նախադասությունները. «*Արթուր ջան, բալիկ ջան այն, որ դու քո ապրած կյանքով չափազանց կեղտոտ ես՝ հոգով, սրտով դա որևէ մեկի համար այլևս գաղտնիք չէ և ապացուցման կարիք չունի...*»: Կամ՝ «*Զզվելի է, որ այդպես էլ քեզ չկորադացար դրսևորել ոչ որպես տղամարդ, ոչ որպես դատախազ՝ անգամ այդքան ասելուց հետո, իսկ որպես աճապարար գրանցածդ արդյունքերը ճիշտ է գերազանցեցին Դեյվիդ Կոպերֆիլդին, բայց տաղանդդ չբավարարեց ոչ որպես տղամարդ և ոչ էլ որպես գլխավոր դատախազ քեզ դրսևորելու կարողություններ ձեռք բերելու համար...*»: Կամ՝ «*...Հ. Գ. Տղամարդկանցից ներողություն եմ խնդրում տղամարդ բռնի այլընտրանքային տարբերակ չգտնելու պատճառով Արթուր Դավթյանին երբեմն տղամարդ անվանելու համար...*»:

2. Ս. Սարգսյանի կողմից 2020թ. հունվարի 5-ին իր ֆեյսբուքյան էջին արել է. «*ՀՀ դեռևս գլխավոր դատախազ ոնց եղավ, որ սերմնացանները չդարձան տուն...*» վերտառությամբ գրառում, որտեղ, մասնավորապես, առկա են հետևյալ նախադասությունները. «*Արթուր ջան, բալիկ ջան այս ենթադրյալ մահացած երեխաները կանգնելու են յուրաքանչյուրիդ առաջ ու բոլորով պատասխան եք տալու թե ո՞նց եղավ, որ իրենց կյանքը հայտնվեց ձեր նման հնձվորների ձեռքում, ո՞նց եղավ, որ մայրերը վերադարձան տուն առանց նորածինների, այլ կերպ ասած՝ սերմնացանները չդարձան տուն, ո՞նց եղավ, որ մարդիք արդարություն են փնտրում ու չեն գտնում*»: Կամ՝ «*Պատասխան ես տալու այն բոլոր գործերի համար, որոնք սարքել ես մարդկանց գլխին, միայն նրա համար, որ պաշտպանես երեսդ լվացող ձեռքերին...*»: Կամ՝ «*Հատուցման ժամը մոտ է, պատասխաններդ համոզված եմ չբավարարող, քանզի որևէ ողջամիտ պատասխան չես կարող հորինել թե ինչու ես գողացել, խեղաթյուրել, կործանել, աղավաղել մարդկանց կյանքերը, չես կարող հորինել մի ողջամիտ պատասխան թե ինչու չիրաժարվեցիր այն արարավոր ժառանգությունից, որը թողել էին նախորդներդ, և ինչու հաճույքով ընդունեցիր և շարունակեցիր նրանց հանցավոր գործը*»:

*Քո տեսակի նկարմամբ հարզանքի բացարձակ բացակայությամբ՝ Սուսաննա Սարգսյան»:*

Դիմողը նշել է, որ փաստաբանի՝ նկարագրված վարքագիծն ակնհայտորեն դուրս է պաշտոնատար անձի գործունեության քննադատության կոռեկտության, անձի պատվի, արժանապատվության հանդեպ հարզանքի շրջանակներից, պարունակում է պաշտոնատար անձին հրապարակայնորեն անձնապես վիրավորելու, պիտակավորելու տարրեր, իսկ առանձին դեպքերում նաև հատում է անմեղության կանխավարկածի սկզբունքը: Ըստ Դիմողի՝ նման վարքագիծն անհարիր է փաստաբանի բարձր կոչմանը, մասնագիտության հեղինակությանը և խաթարում է փաստաբանության նկատմամբ վստահությունն ու հարզանքը:

## **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 20.01.2020թ. թիվ 16-Ա/ԿԳ-20001 և 13.02.2020թ. թիվ 31-Ա/ԿԳ-20004 որոշումներով Պատասխանողի նկատմամբ հարուցվել է թվով երկու կարգապահական վարույթ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Փաստաբանի վարքագծի կանոնագիրք** կամ **Կանոնագիրք**) 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով:

24.01.2020թ. առաջին կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին, իսկ երկրորդ կարգապահական գործը 02.03.2020թ. հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Գևորգ Մարտիրոսյանին (**այսուհետ՝ նաև, համապատասխանաբար, Նախապատրաստող 1 և Նախապատասարատող 2, իսկ միասին նշելիս՝ Նախապատրաստողներ**):

## **3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.**

Դիմողը թիվ ԿԳ-20001 կարգապահական գործի (այսուհետ՝ առաջին կարգապահական գործ) նախապատրաստման ընթացքում ներկայացրել է գրություն, որով խնդրել է, որպես բացատրություն հիմք ընդունել իր կողմից 14.12.2019թ. Պալատին ներկայացրած դիմումը:

Դիմողը թիվ ԿԳ-20004 կարգապահական գործի (այսուհետ՝ երկրորդ կարգապահական գործ) նախապատրաստման ընթացքում ներկայացրել է գրություն, որով խնդրել է, որպես բացատրություն հիմք ընդունել իր կողմից 14.01.2020թ. Պալատին ներկայացրած դիմումը:

Դիմողը, թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

### **3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.**

Օրենքի 39.3 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Փաստաբանին առաջարկվել է

ներկայացնել բացատրություն:

1-ին կարգապահական գործով իր բացատրությամբ Փաստաբանը հայտնել է հետևյալը: Ըստ Փաստաբանի՝ Դիմողը լավ չի պատկերացնում, թե ինչ է իրենից ներկայացնում հրապարակային, հրապարակախոսական գործունեությունը և վստահորդի պաշտպանությունը: Մասնավորապես, տվյալ հրապարակումները վերաբերում են ապօրինի որդեգրումների գործով տոժող ճանաչված իր վստահորդներին և ոչ թե իր հրապարակային, հրապարակախոսական գործունեությանը: Ըստ այդմ, Փաստաբանն իրականացրել է իր վստահորդների շահերի պաշտպանությունը և գործել է ազատ:

Ըստ Փաստաբանի՝ Դիմողը Պալատին նման հիմքով դիմելու համար պետք է առնվազն ունենա Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի իրավունքների և ազատությունների խախտման փաստը հաստատող օրինական ուժ ստացած դատական ակտ, որը տվյալ դեպքում գոյություն չունի:

Փաստաբանի կարծիքով Դիմողը դիմումին չի կցել Արթուր Դավթյանի ներկայացուցիչ լինելը հավաստող լիազորագիրը, հետևաբար նա Արթուր Դավթյանին ներկայացնելու լիազորություն չունի:

Փաստաբանի պնդմամբ, եթե իր կողմից հրապարակայնորեն արված արտահայտություններով խախտվել են Արթուր Դավթյանի իրավունքներն ու օրինական շահերը, ապա վերջինս կարող է դիմել դատարան, և այդ դեպքում Փաստաբանը, ունենալով հակառակ կարծիք, կներկայացնի իր հիմնավորումները:

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողի կողմից բացատրություն չի ներկայացվել:

2-րդ կարգապահական գործով Փաստաբանը հայտնել է, որ գրառումների վարկաբեկիչ լինելու մասով Դիմողը կարող է դիմել «Youtube» ցանցի ալիքի օգտատերերին:

Ըստ Փաստաբանը, եթե Դիմողը գտնում է, որ իր հրապարակումները բարոյականության նորմերից դուրս են, ապա կարող է դիմել քաղաքացիական գործեր քննող դատարանին, քանի որ միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով կարող է արձանագրել՝ արդյոք Փաստաբանի կատարած հարպարակումներում օգտագործված իմաստային ձևակերպումներն ու որակումները դուրս են բարոյականության սահմաններից, թե՛ ոչ: Եթե դատարանը կհամարի, որ Փաստաբանի կողմից արված ձևակերպումներն ու որակումները դուրս են բարոյականության սահմաններից, ապա կքննարկվի դրանց՝ փաստաբանական էթիկայից դուրս լինել-չլինելու հարցը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Փաստաբանը փաստել է, որ Պալատը քաղաքացիական գործեր քննող դատարան չէ:

Փաստաբանը նաև հայտնել է, որ Դիմողի գնահատականն իր կողմից արված հայտարարություններին խիստ սուբյեկտիվ է և առարկայազուրկ:

Պատասխանողը հեռավար կարգով միացել է Խորհրդի 23.06.2020թ. և 23.09.2020թ. Խորհրդի նիստերին և վերահաստատել է իր դիրքորոշումը:

Խորհրդի նիստում Պատասխանողը միջնորդություն է ներկայացնել կարգապահական գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ՝ այն հիմնավորմամբ, որ կա հարուցված քրեական գործ, որի հանգուցալուծումն ուղղակի ազդեցություն ունի

սույն կարգապայական գործի քննության համար:

Պատասխանողի միջնորդությունը Խորհրդի կողմից մերժվել է:

Պատասխանողը նաև վերահաստատել է իր դիրքորոշումը:

### **3.3 Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

### **4. Կարգապահական գործը նախապատրաստողների եզրակացությունները և գործի հանձնումը Խորհրդին.**

- 23.03.2020թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանը կազմել է եզրակացություն:

- 10.04.2020թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Գևորգ Մարտիրոսյանը կազմել է եզրակացություն:

- 30.03.2020թ. թիվ ԿԳ-20001 կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

- 21.04.2020թ. թիվ ԿԳ-20004 կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

- Խորհրդի 08.09.2020թ. թիվ 76-Ա որոշմամբ նշյալ երկու կարգապահական վարույթները միացվել են մեկ վարույթում:

- Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 23.06.2020թ.' ժամը՝ 19:00-ին 08.09.2020թ.' ժամը՝ 18:30-ին և 18:30-ին, 15.09.2020թ.' ժամը՝ 19:30-ին, 23.09.2020թ.' ժամը՝ 18:30-ին, Պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

### **5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

**Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողների եզրակացությունները, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝**

Պատասխանողի կողմից «Facebook» սոցիալական ցանցում արվել են հետևյալ գրառումները՝

- Պատասխանողի ֆեյսբուքյան էջ, 14.12.2019թ. «Դեռևս գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հույսը դրել է հանգած հրաբուխների և դրանցից մնացած մոխիրների վրա...» «Ախր այ Արթուր ջան, այ բալիկ ջան էս հանգած

հրաբուխները ճար անող էին թող իրենց գլխին ճար անեին, ո՞ր ես ընկել դրանց գիրկը: Խելքդ գլուխդ հավաքի, աջ ու ձախ միջոցների մի վազնի, մարդ ես դեռ այնքան նեղ օրեր կան առջևում, մի քիչ էլ վաղվա մասին մտածի»,

- Պատասխանողի ֆեյսբուքյան էջ, 10.12.2019թ. «Հիմա դուք առերևույթ գլխավոր դատախազ՞դ եք, թե՛ առերևույթ տղամարդ» հակաէթիկական վերնագրի և կոլաժային լուսանկարի ներքո արված գրառման մեջ առկա են հետևյալ ձևակերպումները. «...Այնպես որ ընդունեք բարի խորհուրդս ու մի խորացրեք ձեր առանց այն էլ ոչ հաճելի վիճակը, և մի թփրտացեք, միևնույն է դրանից ձեր բնույթն ու բովանդակությունը չի փոխվում իսկ մարդկանց մոտ հոգեխանդարման տրավորություններ հաստատաբանում է...»,

- 07.12.2019թ. «ԱԳԼԱ Լոյերս փաստաբանական ընկերության» ֆեյսբուքյան էջ. «Պարոն դեռևս գլխավոր դատախազ միգուցե դու՞ք եք հովանավորում երեխաների վաճառքով զբաղվող մաֆիան և սնվում դրա գործունեությունից», «Կարծում եմ, որ հեռու չէ այն ժամանակը, որ ստիպված էք լինելու պատասխան տալ բոլոր կորած երեխաների համար: Եվ այդ նույն գործի շրջանակներում էլ հավանաբար պատասխան կտաք, թե որտեղից ընդամենը երկու տարում աստղաբաշխական կարողության տեր դարձաք և արդյոք այդ կարողությունը ստեղծված չէ երեխաների վաճառքից»:

- 06.06.2020թ., Պատասխանողի ֆեյսբուքյան էջ. «Կոնիչտայից մինչև Դեյվիդ Կոպերֆիլդ՝ ՀՀ դեռևս գլխավոր դատախազը շարունակում է թփրտալ» վերտառությամբ գրառում, որտեղ, մասնավորապես, առկա են հետևյալ նախադասությունները. «Արթուր ջան, բալիկ ջան այն, որ դու քո ապրած կյանքով չափազանց կեղտոտ ես՝ հոգով, սրտով դա որևէ մեկի համար այլևս գաղտնիք չէ և ապացուցման կարիք չունի...»: Կամ՝ «Զգվելի է, որ այդպես էլ քեզ չկորաղացար դրսևորել ոչ որպես տղամարդ, ոչ որպես դատախազ՝ անգամ այդքան ասելուց հետո, իսկ որպես աճպարար գրանցածդ արդյունքերը ճիշտ է գերազանցեցին Դեյվիդ Կոպերֆիլդին, բայց տաղանդդ չբավարարեց ոչ որպես տղամարդ և ոչ էլ որպես գլխավոր դատախազ քեզ դրսևորելու կարողություններ ձեռք բերելու համար...»: Կամ՝ «...Հ.Գ. Տղամարդկանցից ներողություն եմ խնդրում տղամարդ բառի այլընտրանքային տարբերակ չգտնելու պատճառով Արթուր Դավթյանին երբեմն տղամարդ անվանելու համար...»:

- 05.06.2020թ. Պատասխանողի ֆեյսբուքյան էջ. «ՀՀ դեռևս գլխավոր դատախազ ոնց եղավ որ սերմնացանները չդարձան տուն...» վերտառությամբ գրառում, որտեղ, մասնավորապես, առկա են հետևյալ նախադասությունները. «Արթուր ջան, բալիկ ջան այս ենթադրյալ մահացած երեխաները կանգնելու են յուրաքանչյուրիդ առաջ ու բոլորով պատասխան եք տալու թե ո՞նց եղավ, որ իրենց կյանքը հայտնվեց ձեր նման հնձվորների ձեռքում, ո՞նց եղավ, որ մայրերը վերադարձան տուն առանց նորածինների, այլ կերպ ասած՝ սերմնացանները չդարձան տուն, ո՞նց եղավ, որ մարդիք արդարություն են փնտրում ու չեն գտնում»: Կամ՝ «Պատասխան ես տալու այն բոլոր գործերի համար, որոնք սարքել ես մարդկանց գլխին, միայն նրա համար, որ պաշտպանես երեսդ լվացող ձեռքերին...»: Կամ՝ «Հատուցման ժամը մոտ է, պատասխաններդ համոզված եմ չբավարարող, քանզի որևէ ողջամիտ պատասխան չես կարող հորինել թե ինչու ես գողացել,

խեղաթյուրել, կործանել, աղավաղել մարդկանց կյանքերը, չես կարող հորինել մի ողջամիտ պատասխան թե ինչու չհրաժարվեցիր այն արատավոր ժառանգությունից, որը թողել էին նախորդներդ, և ինչու հաճույքով ընդունեցիր և շարունակեցիր նրանց հանցավոր գործը: Քո տեսակի նկատմամբ հարգանքի բացարձակ բացակայությամբ՝ Սուսաննա Սարգսյան»:

Նշված փաստերը հաստատվում են կարգապահական գործի նյութերով, մասնավորապես՝ Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությամբ, «Facebook» սոցիալական ցանցից արված քաղվածքներով, «Յութուբ» ալիքի հղումներով:

#### **6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Սուսաննա Սարգսյանի (արտոնագիր 1536, ստացած՝ 14.07.2012թ.) նկատմամբ 2014-2020թթ. ընկած ժամանակահատվածում 4 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ՝ չհաշված սույն կարգապահական վարույթը (4 ավարտված): Բոլոր ավարտված վարույթները Խորհրդի որոշումներով կարճվել են:

#### **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

**Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սուսաննա Սարգսյանը ենթակա է պատասխանավորության Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման համար:**

**Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:**

Օրենքի 19-րդ հոդվածի վերոնշյալ նորմը փաստաբանի վարքագծի իրավաչափությունը գնահատելիս հղում է անում Կանոնագրքի իրավադրույթներին: Այսինքն՝ Պատասխանողի կողմից Օրենքի նշյալ իրավադրույթի խախտման հանգամանքն ուղղակիորեն կապվում է Կանոնագրքի շրջանակներում Պատասխանողի վարքագծի գնահատման հետ: Հետևաբար, Կանոնագրքի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

**Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:**

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

- **արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու**



իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում.

- արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները.

- արդյո՞ք փաստաբանի կողմից կարծիքի հրապարակային արտահայտումը գտնվում է միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումների շրջանակներում.

- արդյո՞ք Պատասխանողն իր վարքագծով կասկածի տակ է դրել կամ խաթարել է փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

**7.1. Արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում:**

Խորհուրդը գտնում է, որ Կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկել որպես օրենքով նախատեսված սահմանափակում՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե արդյոք Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված փաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները դիտվում են «**օրենքով նախատեսված սահմանափակման**» համատեքստում, թե՛ ոչ:

KINCSES v. HUNGARY գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ **դիմողի արտահայտվելու ազատությանը միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի՝ 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով<sup>2</sup>:**

Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենքի (թիվ 11 ակտի) 37ա հոդվածի համաձայն՝ *փաստաբանի կողմից կարգապահական խախտումը համարվում է կատարված, եթե նա ..... խախտել է փաստաբանի էթիկայի նորմերով նախատեսված պարտավորությունները:*

Նշված օրենքի 38-րդ հոդվածը սահմանում է Հունգարիայի փաստաբանների պալատի կողմից կիրառվող կարգապահական տույժերի տեսակները:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունգարիայի փաստաբանը փաստաբանական պալատի կողմից կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել Փաստաբանների էթիկայի կանոնների 12.1 և 15.2 կետերի խախտման համար, ապա **միանշանակ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով**

<sup>1</sup> Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենք:

<sup>2</sup> Տե՛ս KINCSES v. HUNGARY 27.01.2015 ( no. 66232/10, § 27)

**նախատեսված սահմանափակումներին:**

Նույն կերպ պետք է ընկալել Պալատի կողմից հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները, քանի որ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար.....:

**7.2. Արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները, սույն կարգապահական գործով:**

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել **միայն օրենքով՝** պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Այդպիսի կարգավորում ունի նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պարժամիջոցներով, **որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝** ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մեկնաբանելով համացանցում արտահայտվելու ազատության պաշտպանության շրջանակների հարցը, նշել է, որ անձի արժանապատվության նկատմամբ ոտնձգությունը կարող է արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության շրջանակից դուրս լինել, եթե դա անհիմաստ վիրավորանք է, օրինակ՝ երբ վիրավորական հայտարարության միակ նպատակը անձին վիրավորելն է:<sup>3</sup>

Կարևոր է պարզել, թե Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո արդյոք փաստաբանի վարքագծի սահմանափակումը եղել է իրավաչափ, թե՛ ոչ:

**ա)** Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 27-րդ հոդվածի և 39-րդ հոդվածի համաձայն, հաշվի առնելով KINCSES v. HUNGARY գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 27.01.2015թ. որոշմամբ<sup>4</sup> բերված իրավական դիրքորոշումները, Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումներն ամբողջությամբ տեղավորվում են

<sup>3</sup> CASE OF MAGYAR TARTALOMSZOLGÁLTATÓK EGYESÜLETE AND INDEX.HU ZRT-ն ընդդեմ Հունգարիայի, թիվ 22947/13, 02/02/2016, § 76:

<sup>4</sup> Տես՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված **«որոնք նախատեսված են օրենքով»** հասկացության մեջ:

Եվրոպական դատարանի նշված գործով փաստական հանգամանքները նույնական են, այնքանով, որքանով՝ KINCSES v. HUNGARY գործով դիմողը փաստաբան է և վերջինիս պատասխանատվության է ենթարկել փաստաբանական պալատն արտահայտվելու համար՝ փաստաբանի էթիկայի կանոնների խախտման հիմքով: Հունգարիայի փաստաբանության օրենսդրությունը էթիկայի կանոնների մասով նույնպես վկայակոչող (բլանկետային) է և հղում է կատարում արդեն փաստաբանական պալատի սահմանած էթիկայի կանոններին:

**բ)** Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք Պալատը, փաստաբանի արտահայտվելու ազատությունը Կանոնագրքով սահմանափակելով, իրավաչափ նպատակ է հետապնդել պաշտպանելու այլ անձանց հեղինակությունը, թե՛ ոչ: Նշվածը պարզելու համար նախ պետք է մեջբերել Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը, այն է՝ Փաստաբանների պալատի խնդիրներն են՝ 4) *վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից ..... փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման ..... նկատմամբ.* 5) *միջոցներ ձեռնարկել **փաստաբանության** հեղինակության բարձրացման ուղղությամբ:* Փաստաբանության հասկացությունը տրված է նույն օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ **Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է. որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:**

Նշված իրավական նորմերի վերլուծությունից միանշանակ պարզ է դառնում, որ Պալատի խնդիրներից է բարձր պահել ՀՀ բոլոր փաստաբանների միավորման արդյունքում ձևավորված կառույցի հեղինակությունը, և հետևաբար, Պալատի խորհրդի կողմից այն փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, որը խախտել է Կանոնագրքի համապատասխան պահանջը՝ դրանով իսկ բացասաբար ազդելով բոլոր փաստաբանների հավաքական միավորում հանդիսացող փաստաբանության հեղինակության վրա, իրավաչափ է:

**գ)** Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք ժողովրդավարական հասարակության համար նման միջամտությունն անհրաժեշտ էր և հետևաբար, արդյո՞ք պահպանվել էր այն հավասարակշռությունը մի կողմից փաստաբանության հեղինակության պաշտպանության, և մյուս կողմից անձի արտահայտվելու ազատության սահմանափակման միջև: Այս հարցին պատասխանելու համար նախ և առաջ անհրաժեշտ է անդրադառնալ հասարակությունում փաստաբանության դերին և նշանակությանը:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ *փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում:* Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես

փաստաբանական միության անդամ<sup>5</sup>:

**Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝** իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

**Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝** մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պարզաձ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև **Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները:**

**Պալատի կանոնադրության 2.2 կետի 8-րդ ենթակետի համաձայն՝** փաստաբանների պալատը հետապնդում է նաև հետևյալ նպատակները և խնդիրները՝ **նպաստել** Հայաստանի Հանրապետության լիակատար ինտեգրմանը եվրոպական կառույցներում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցմանը եվրոպական չափանիշներին, **եվրոպական իրավական սրանդարտների և ավանդույթների արմատավորմանը:**

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (այսուհետ՝ նաև CCBE) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակագրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը<sup>6</sup>:

<sup>5</sup> St' u Casado Coca v. Spain գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, 24.02.1994թ. վճիռը (§ 54):

<sup>6</sup> St' u CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession

**ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ դատարանը նշել է.** «*Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»:* Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները **սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը**»:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ կշեռքի մի նժարի վրա դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս:

Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության համար:

**7.3 Արդյո՞ք փաստաբանի կողմից կարծիքի հրապարակային արտահայտումը գտնվում է միայն Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումների շրջանակներում.**

**Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

**Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով,** եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

**Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար.....:*

Վերը հիշատակված նորմերից հետևում է, որ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի և Կանոնագրքի կարգավորման առարկան տարբերվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով կարգավորվող առարկայից:

Օրենսգրքի 1087.1 հոդվածը պաշտպանում է անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, իսկ Կանոնագիրքը պաշտպանում է փաստաբանության՝ որպես մասնագիտական միավորման հեղինակությունը, անկախությունը և օրինապահությունը:

Կանոնագրքի պահանջի խախտման համար փաստաբանի՝ պատասխանատվություն կրելը չի լուծում կարգապահական վարույթով դիմողի մասնավոր շահի պաշտպանության հարցը: Օրինակ՝ եթե փաստաբանը պայմանագրով նախատեսված հոնորարի այն մասը, որի համար ծառայություն չի մատուցել, պայմանագիրը լուծելուց հետո չի վերադարձնում վստահորդին, ապա նա խախտում է Կանոնագրքի պահանջը, սակայն փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու արդյունքում նրա վստահորդի մոտ չի ավելանում փաստաբանի կողմից վճարման ենթակա գումարը: Ի վերջո, գումարի վերադարձման համար վստահորդը պետք է դիմի դատարան:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ կարող է քննարկել՝ Պատասխանողի արարքը հակասում է Կանոնագրքի պահանջներին, թե՛ ոչ:

#### **7.4 Արդյո՞ք Պատասխանողն իր վարքագծով կասկածի փակ է դրել կամ խաթարել է փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը.**

**Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝** *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 2.2.2 ենթակետով փաստաբանի վրա դրվում է համակողմանի նեգատիվ պարտականություն իր գործունեության բոլոր բնագավառներում ձեռնպահ մնալ փաստաբանության հանրային հեղինակությունը կասկածի տակ դնող կամ խաթարող վարքագծի դրսևորումից: Սույն պարտականությունը փաստաբանի պատշաճ վարքագծի նվազագույն շեմն է, երբ փաստաբանից պահանջվում է առնվազն չկատարել հանրորեն պարսավելի, անպարկեշտ, հակաօրինական և փաստաբանի մասնագիտության հանրային վարկը խաթարող գործողություն կամ անգործություն:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան գործունեություն

իրականացնող սուբյեկտ նպաստում է արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության ընկալման համար:

Սույնի համատեքստում փաստաբանի վրա են դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ. լինի դա մասնագիտական գործունեության, թե այլ ոլորտներում: Ուստի՝ փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ, այլ ընդգրկում են նրա մասնագիտական-իրավական և բարոյական օրինակելիության բարձր չափանիշներ միջանձնային և հասարակական ամենատարբեր շփումների և առնչությունների ժամանակ:

Փաստաբանի՝ որպես անհատի գործունեությունը հասարակության կողմից ասոցացվում է փաստաբանի ինստիտուտի հետ, ընդհանրապես, ուստի և՛ փաստաբանն իր առօրյա գործունեության իրականացման ընթացքում պետք է դրևսորի այնպիսի վարքագիծ, որը կնպաստի փաստաբանի կոչման և առաքելության նկատմամբ հարգանքի և վստահության բարձրացմանը, ինչը փաստաբանի բարոյական պարտավորությունն է: Փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է իր գործընկերների և այլ անձանց անձի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրևսորելը, միջանձնային քաղաքավարի վարվեցողությունը:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ Պատասխանողի կողմից «Facebook» սոցիալական ցանցում արվել են հետևյալ գրառումները՝

Պատասխանողի ֆեյսբուքյան էջ, 14.12.2019թ. *«Դեռևս գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հույսը դրել է հանգած հրաբուխների և դրանցից մնացած մոխիրների վրա...» «Ախր այ Արթուր ջան, այ բալիկ ջան է՛ր հանգած հրաբուխները ճար անող էին թող իրենց գլխին ճար անեին, ո՛ր ես ընկել դրանց գիրկը: Խելքդ գլուխդ հավաքի, աջ ու ձախ միջոցներդ մի վաղնի, մարդ ես դեռ այնքան նեղ օրեր կան առջևում, մի քիչ էլ վաղվա մասին մտածի»*,

Պատասխանողի ֆեյսբուքյան էջ, 10.12.2019թ. *«Հիմա դուք առերևույթ գլխավոր դատախազ եք, թե՛ առերևույթ տղամարդ»* հակաէթիկական վերնագրի և կոլաժային լուսանկարի ներքո արված գրառման մեջ առկա են հետևյալ ձևակերպումները. *«...Այնպես որ ընդունեք բարի խորհուրդս ու մի խորացրեք ձեր առանց այն էլ ոչ հաճելի վիճակը, և մի թիրտացեք, միևնույն է դրանից ձեր բնույթն ու բովանդակությունը չի փոխվում իսկ մարդկանց մոտ հոգեխանդարման տրավորություններ հաստատ առաջացնում է...»*,

07.12.2019թ. *«ԱԳԼԱ Լոյերս փաստաբանական ընկերության»* ֆեյսբուքյան էջ *«Պարոն դեռևս գլխավոր դատախազ միգուցե դու՛ք եք հովանավորում երեխաների վաճառքով զբաղվող մաֆիան և սնվում դրա գործունեությունից»*, *«Կարծում եմ, որ հեռու չէ այն ժամանակը, որ ստիպված էք լինելու պատասխան տալ բոլոր կորած*

երեխաների համար:

Եվ այդ նույն գործի շրջանակներում էլ հավանաբար պատասխան կտաք, թե որտեղից ընդամենը երկու տարում աստղաբաշխական կարողության տեր դարձաք և արդյոք այդ կարողությունը ստեղծված չէ երեխաների վաճառքից»:

06.06.2020թ., Պատասխանողի ֆեյսբուքյան էջ. «Կոնիչտայից մինչև Դեյվիդ Կոպերֆիլդ՝ ՀՀ դեռևս գլխավոր դատախազը շարունակում է թփրտալ» վերտառությամբ գրառում, որտեղ, մասնավորապես, առկա են հետևյալ նախադասությունները. «Արթուր ջան, բալիկ ջան այն, որ դու քո ապրած կյանքով չափազանց կեղտոտ ես՝ հոգով, սրտով դա որևէ մեկի համար այլևս գաղտնիք չէ և ապացուցման կարիք չունի...»: Կամ՝ «Զգվելի է, որ այդպես էլ քեզ չկորաղացար դրսևորել ոչ որպես տղամարդ, ոչ որպես դատախազ՝ անգամ այդքան ասելուց հետո, իսկ որպես ածպարար գրանցածդ արդյունքերը ճիշտ է գերազանցեցին Դեյվիդ Կոպերֆիլդին, բայց տաղանդդ չբավարարեց ոչ որպես տղամարդ և ոչ էլ որպես գլխավոր դատախազ քեզ դրսևորելու կարողություններ ձեռք բերելու համար...»: Կամ՝ «...Հ. Գ. Տղամարդկանցից ներողություն եմ խնդրում տղամարդ բառի այլընտրանքային տարբերակ չգտնելու պատճառով Արթուր Դավթյանին երբեմն տղամարդ անվանելու համար...»:

05.06.2020թ. Պատասխանողի ֆեյսբուքյան էջ. «ՀՀ դեռևս գլխավոր դատախազ ոնց եղավ որ սերմնացանները չդարձան տուն...» վերտառությամբ գրառում, որտեղ, մասնավորապես, առկա են հետևյալ նախադասությունները. «Արթուր ջան, բալիկ ջան այս ենթադրյալ մահացած երեխաները կանգնելու են յուրաքանչյուրիդ առաջ ու բոլորով պատասխան եք տալու թե ո՞նց եղավ, որ իրենց կյանքը հայտնվեց ձեր նման հնձվորների ձեռքում, ո՞նց եղավ, որ մայրերը վերադարձան տուն առանց նորածինների, այլ կերպ ասած՝ սերմնացանները չդարձան տուն, ո՞նց եղավ, որ մարդիք արդարություն են փնտրում ու չեն գտնում»: Կամ՝ «Պատասխան ես տալու այն բոլոր գործերի համար, որոնք սարքել ես մարդկանց գլխին, միայն նրա համար, որ պաշտպանես երեսդ լվացող ձեռքերին...»: Կամ՝ «Հատուցման ժամը մոտ է, պատասխաններդ համոզված եմ չբավարարող, քանզի որևէ ողջամիտ պատասխան չես կարող հորինել թե ինչու ես գողացել, խեղաթյուրել, կործանել, աղավաղել մարդկանց կյանքերը, չես կարող հորինել մի ողջամիտ պատասխան թե ինչու չհրաժարվեցիր այն արատավոր ժառանգությունից, որը թողել էին նախորդներդ, և ինչու հաճույքով ընդունեցիր և շարունակեցիր նրանց հանցավոր գործը»:

Քո տեսակի նկատմամբ հարգանքի բացարձակ բացակայությամբ՝ Սուսաննա Սարգսյան»:

Պատասխանողի՝ երկու կարգապահական գործերում (միացված մեկ վարույթում) մատնանշված արտահայտությունները դուրս են կոռեկտության շրջանակներից և պարունակում են վիրավորական ձևակերպումներ: Նման վարքագիծն անհարիր է իրավական պետությունում փաստաբանին՝ որպես իրավապաշտպան գործառույթ իրականացնող անձի և չի նպաստում փաստաբանության ինստիտուտի և փաստաբանի մասնագիտության հանրային հեղինակության ամրապնդմանը, փոխարենը՝ ստվերում է այն:



Խորհուրդը հատկանշական է համարում այն հանգամանքը, որ Պատասխանողն իր բացատրությունում ընդունել է իրեն վերագրվող արտահայտությունները կատարելու փաստը:

Խորհրդի գնահատմամբ, երկու կարգապահական գործերում (միացված մեկ վարույթում) նշված արտահայտությունները փաստաբան Սուսաննա Սարգսյանը կատարել է դիտավորությամբ, այսինքն գիտակցել է այդ արտահայտությունները կատարելու հակասությունը Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջին:

### **Կարգապահական տույժի ընտրությունը**

**Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

**Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
- 4) տուգանք
- 5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

**Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Սուսաննա Սարգսյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը, միաժամանակ սահմանելով լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 3-րդ մասի պահանջներով,

Խորհուրդը՝

**Ո Ր Ո Շ Ե Ց՝**

1. Փաստաբան Սուսաննա Սարգսյանին (արտոնագիր թիվ 1536) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Սուսաննա Սարգսյանի նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 (վեց) ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով, 4 (չորս) ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

**Ծանոթություն.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Սեդրակ Ասատրյան

23 սեպտեմբերի 2020թ.  
թիվ ԿԳ/79-Ա  
ք. Երևան